ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻ

(Ծննդյան 90-ամյակի առթիվ)

ՀՍՍՀ ԳԱ. ակադեմիկոս Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հովսեփ Օրբելին ապրեց մոտ 75 տարի (1887—1961)։ Լինելով ականավոր հայագետ, կովկասագետ և արևելագետ, նա անջնջելի հետք թողեց գիտության մեջ։ Նա մեծ քաղաքացի էր, գիտության խոշոր կազմակերպիչ և փայլուն հռետոր։ Պապը, նույնպես Հովսեփ Օրբելի, հայ հոգևորական էր, հայրը՝ իրավաբան։ Ինքը, Հովսեփը, չափազանց աշխույժ և ուշիմ մի պատանի 1904 թ. ավարտելով Թբիլիսիի դասական գիմնազիան, շարունակեց իր կրթությունը Պետերբուրգի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետի դասական բաժնում։ Բայց Կովկասի զավակին ձգում էին հայրենի ժողովրդի և, իր համար նույնպես հարազատ, վրաց ժողովրդի անցյալի պատմությունն ու մշակույթը, որոնք բազում թելերով կապված էին հարևան Իրանի անցյալի հետ։ Եվ երիտասարդ Օրբելին 1907 թ. սկսում է հաճախել Արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-վրացական-պարսկական բաժանմունքի պարապմունքները։ Նախահեղափոխական Ռուսաստանի գիտական մտքի խոշորագույն կենտրոնում աշակերտելով ականավոր գիտնականների, Հովսեփ Օրբելին ստանում է դասական և արևելագիտական պատմա-բանասիրական հիանալի պատրաստականություն, որը նրա առջև բացում է գիտական աշխատանքի լայն հորիզոններ՝ երկու բնագավառում էլ։ Բայց հաղթում է արևելագիտությունը, և «մեղավորները» եղան նրա մեծանուն ուսուցիչ Ն. Մառը և Բագրատունիների հռչակավոր մայրաքաղաք Անին։ Ն. Մառը, ձեռնարկելով Անիի պեղումները, իր աշակերտներին մասնակից էր դարձնում այդ աշխատանքներին։ Սկսած 1906 թ. Օրբելին մասնակցեց Անիի պեղումներին մինչև 1917 թ., երբ թուրքական զորքերի գրավումից հետո այլևս անհնարին դարձան աշխատանքներն այնտեղ։ Անիի հնությունների թանգարանի վարիչ, արշավախմբի պետի օգնական, Մառի բացակայության ժամանակ նրան փոխարինող Օրբելին Անիում աշխատեց մեծ նվիրումով։

Դեռևս ուսանող Օրբելին 1908—1911 թթ. հրատարակեց 9 աշխատություն։ Անին դարձավ մի երկրորդ համալսարան Օրբելու և պեղումների մի շարք մասնակիցների համար։ Անի—Մառ—Օրբելի անունները իրար հետ կապվեցին անքակտելի կապերով։

1911 թ. Օրբելին նոր էր ավարտել Պետերբուրգի համալսարանի հիշյալ երկու ֆակուլտետները, բայց արդեն ճանաչված գիտնական էր և ուսումնասիրությունների համար գործուղվեց Արևմտյան Հայաստան։ Հետազոտություններ կատարելով Վանում, Աղթամարում, Վասպուրականի այլ շրջաններում, Էրզրումում, հին Բայազետում, Բաղավանում, Օրբելին Պետերբուրգ վերադարձավ հնագիտական, վիմագրական, աղգագրական-բանահյուսական այնչափ բազմազան և առատ նյութեր հավաքած, որ թվում էր թե դա վեր էր մի մարդու ուժերից։

1913 թ. Հ. Օրբելին, հանձնելով մագիստրոսական քննությունները, հաջորդ տարին արդեն պրիվատ-դոցենտի կոչումով սկսում է դասախոսություններ կարդալ Պետերբուրգի համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետում՝ հայոց պատմություն, հնագիտություն, վիմագրություն և քրդերեն լեզու առարկաների ծրագրով։ Նրան հանձնարարվում է հայկական, վրացական և մուսուլմանական արվեստների մասին հոդվածներ գրել Բրոկգաուզի և Եֆրոնի «Նոր հանրագիտարանի» համար, որը նա կատարում է հաջողությամբ։ 1915 թ. Օրբելին ուսումնասիրում է Ղրիմի հայկական հուշարձանները։

1916 թ. Ռուսական հնագիտական ընկերությունը (որի անդամ էր ընտրվել Օրբելին դեռևս 1912 թ.) Մառի գլխավորությամբ մի արշավախումբ է ուղարկում Վան՝ հնագիտական ուսումնասիրություններ կատարելու։ Արշավախմբի պետի տեղակալ Հ. Օրբելին ինքնուրույն պեղումներ է ձեռնարկում Վանում, ուր նրան սպասում էր խոշոր հայտնագործություն։ Վանա ժայռի խորշերից մեկում նա հայտնաբերում է ուրարտական Սարդուր II թագավորի 265 տող կազմող տարեգրությունը, որն ուրարտական սեպագրության և պատմության խոշորագույն հուշարձան է։ 1912—1917 թթ. Օրբելին հրատարակում է հայկական վիմագրությանը և Անդրկովկասի ու Մերձավոր Արևելքի ժողովուրդների մշակույթին նվիրված ևս 14 աշխատություն՝ առանձին գրքույկներով, մանավանդ «Христианский Восток» ամսագրում։

Ռուսական ինքնակալության տապալումը և Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հաղթանակը Հ. Օրբելին դիմավորեց ոգևորությամբ, պատրաստակամ իր գիտելիքներն ու եռանդը ի սպաս դնելու նոր հասարակության գիտական և մշակութային շինարարության բնագավառներում։ Ճանաչված և առաջավոր գիտնականի առջև բացվեց գիտական, մանկավարժական և գիտա-կազմակերպական գործունեության լայն ասպարեզ. Օրբելին գործի անցավ՝ դրսևորելով իր տաղանդն ու անսպառ եռանդը։ Բավական է սոսկ թվարկել այն պաշտոններն ու պարտականությունները, որոնք նա կատարել է 1918—1920 թթ.։ Պետրոգրադի համալսարանի դոցենտ Հովսեփ Օրբելին 1918 թ. հունիսին ընտրվում է Պետրոգրադի հնագիտական ինստիտուտի ասիստենտ և պետական հնագիտական հանձնաժողովի խորհրդի անդամ՝ ակտիվ մասնակցություն ցուցաբերելով այդ հանձնաժողովի վերակազմմանը «Նյութական կուլտուրայի պատմության ռուսական Ակադեմիայի», նա ընտրվում է նաև Մոսկովյան հնագիտական ընկերության անդամ։ Նույն 1918 թ. հոկտեմբերին նա նշանակվում է Մոսկվայի Լազարյան ինստիտուտի պրոֆեսոր և մասնակցում այդ ինստիտուտի վերակազմման աշխատանքներին։ 1919 թ. փետրվարին Օրբելին նշանակվում է Լուսժողկոմատի թանգարանային գործերի կոլեգիայի գիտական քարտուղար, դասախոսություններ է կարդում Պետրոգրադի հնագիտության ինստիտուտում, հունիսին ընտրվում է Արվեստի ինստիտուտի պրոֆեսոր՝ մուսուլմանական մշակույթի ամբիոնի գծով, օգոստոսին՝ Պետրոգրադի համալսարանի պրոֆեսոր՝ Արևելքի արվեստի պատմության գծով։ Նա ընտրվում է նյութական կուլտուրայի պատմության ռուսական ակադեմիայի անդամ և նույն ակադեմիայի հայկական ու վրացական հնագիտության և արվեստի բաժնի վարիչ։ 1920 թ. Օրբելին հաստատվում է նույն ակադեմիայի հրատարակչական բաժնի վարիչ և ակադեմիայի հրատարակությունների խմբագիր, կատարելով իր պարտա-

կանությունները մինչև 1924 թ., միաժամանակ վարելով այդ ակադեմիայի տպարանային գործի կոմիտեի նախագահի պաշտոնը։ Այս ամենը ցայտուն կերպով բնութագրում է նրա գործուն մասնակցությունը Ռուսաստանի Սովետական Սոցիալիստական երիտասարդ Հանրապետության գիտական և կուլտուրական շինարարության գործին։ 1924 թ. անվանի գիտնականն ընտրվում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ։



Օրբելու գիտական և գիտա-կազմակերպական գործունեության մեջ բացառիկ տեղ է գրավում աշխատանքը Պետական էրմիտաժում։ Դեռևս 1920 թ. նա սկսում է վարել էրմիտաժի Կովկասի, Իրանի և Միջին Ասիայի բաժնի վարիչ-պահպանի պարտականությունները։ Նրա եռանդուն ջանքերի շնորհիվ պետական և մասնավոր հավաքածուներից մեծ քանակությամբ թանգարանային նյութեր են կենտրոնացվում էրմիտաժում և 1926 թ., նրա իսկ նախագծով, բացվում է էրմիտաժի շատ հարուստ արևելյան ինքնուրույն բաժինը, որի վարիչի պաշտոնը ստանձնում է ինքը։ Աշխատելով Պետական էրմիտաժում, Օրբելին 1924—1929 թթ. վարել է Լենինգրադի համալսարանի հայվրացական բանասիրության ամբիոնի վարիչի, իսկ 1928—1931 թթ.՝ նույն համալսարանի Արևելքի նյութական մշակույթի պատմության նորաստեղծ ամբիոնի վարիչի պաշտոնները։ 1928 թ. նա գործուղվում է Դաղստան՝ հնագիտական հուշարձանները և Դերբենդի հին պարիսպը ուսումնասիրելու նպատակով, որտեղ հայտնաբերում է պահլավերեն մի քանի արձանագրություն։

1931 թ. Հ. Օրբելին իր ջանքերն ամբողջովին նվիրում է էրմիտաժին, իսկ 1934 թ. հաստատվում է նրա դիրեկտոր և այդ պաշտոնը վարելով մինչև

1951 թ., գլխավորում է այդ խոշորագույն թանգարանի կազմակերպական, ցուցադրական, գիտական բոլոր աշխատանքները, ստեղծում է էրմիտաժի հրատարակչությունը և տպարանը։

1935 թ. Օրբելին ընտրվում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ։

Ականավոր արևելագետի գիտական հետազոտությունների մեջ առանձին տեղ էին գրավում Իրանի հնագիտությունն ու արվեստը, որոնց նա նվիրել է շատ արժեքավոր աշխատություններ։ 1930 թ. նա իբրև ՍՍՀՄ պատգամավոր մասնակցում է Իրանի արվեստի միջազգային II կոնգրեսին Լոնդոնում, 1934 թ. մեկնում է Թեհրան՝ մասնակցելու Ֆիրդուսու ծննդյան 1000-ամյակին նվիրված տոնակատարություններին, իսկ 1935 թ. գլխավորում է իրանական արվեստի և հնագիտության՝ Լենինգրադում գումարված միջազգային III կոնգրեսի աշխատանքները։ Կազմակերպական մեծ շնորհք ցուցաբերելով էրմիտաժի դիրեկտոր Օրբելին 1937 թ. ընտրվում է նաև ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Նյութական կուլտուրայի ինստիտուտի դիրեկտոր։

Օրբելին մեծ նշանակություն էր տալիս արևելքի ժողովուրդների մշակույթի մասսայականացմանը և դրա միջոցներից մեկն էլ համարում էր նրանց մշակույթի խոշորագույն ներկայացուցիչների հոբելյանների նշումը՝ ամենալայն ծրագրով։ Կազմակերպվում էին հոբելյանական նիստեր, զեկուցումներ, ելույթներ ռադիոյով, հոդվածներ թերթերում, ամսագրերում, աշխատությունների տպագրություններ, ցուցահանդեսներ։ Եվ այս ամենը Օրբելին անում էր այնպիսի նվիրումով, ոգևորությամբ, ներշնչանքով, որոնցով անհնարին էր չհամակվել։ Ֆիրդուսու հազարամյակին հետևեց վրաց մեծ բանաստեղծ Շոթա Ռուսթավելու 750-ամյակը 1938 թ., «Սասունցի Դավթի» 1000-ամյակը՝ 1939 թ.։ Ինքը Օրբելին հանդես էր գալիս բազմաթիվ զեկուցումներով, ելույթներով՝ իր խոր գիտելիքներով և փայլուն հռետորական տաղանդով հմայելով ունկնդիրներին։

Ադրբեջանական մեծ բանաստեղծ Նիզամու և ուզբեկական գրականության հիմնադիր Նավոյիի հոբելյաններն էլ նշվեցին 1941 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ պաշարված Լենինգրադում։

Բարձր գնահատանքի և խորին երախտագիտության են արժանի Օրբելու ծառայություններն ու վաստակը հայ մշակույթի և գիտության բնագավառում։ Անիի պեղումների ժամանակ նա Մառի աջ թևն էր։ Այստեղ և Հայաստանի տարբեր շրջաններում կատարած նրա հետազոտությունների արդյունքները գիտական աշխատությունների մի ամբողջ շարք կազմեցին՝ բերելով նրան նշանավոր հայագետի համբավ։

1929 թ. Օրբելին գալիս է Հայաստան՝ ճարտարապետական և հնաբիտակական հուշարձանների ուսումնասիրության համար, իսկ 1936 թ. գլխավորում է Լենինգրադի Պետական էրմիտաժի և Հայաստանի գիտնականներից կազմված միացյալ հնագիտական արշավախմբի աշխատանքները Ամբերդում։

1938 թ. Հ. Օրբելին, հաստատվելով ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (Արմֆանի) նախագահ, կազմակերպում և գլխավորում է գիտության զարգացման գործը Հայաստանում։ Նա իրեն բնորոշ թափ ու կորով հաղորդեց մեր հանրապետության գիտական հաստատություններին, ստույգ տեսավ նրանց զարգացման հեռանկարները։ Նրա ղեկավարության ներքո բնական և հասարակական գիտությունները մեծալես առաջա-

դիմեցին, ամրացան՝ հնարավոր դարձնելով Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծումը 1943 թ.։ Մեծավաստակ գիտնականը ընտրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ, մեծ թափով և հաջողությամբ վարելով այդ պաշտոնը մինչև 1947 թ.։ Ելնելով Լենինգրադում և Երևանում երկու խոշոր գիտական հաստատությունների ղեկավարման անհաղթահարելի դժվարություններից, և հարգելով նրա խնդրանքը, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը Հովսեփ Օրբելուն ազատեց պրեզիդենտի պարտականություններից, նշելով նրա բացառիկ ծառայությունները ակադեմիայի կազմակերպական ամրապնդման և գիտական ղեկավարման բնագավառներում։

1951 թ. Օրբելին ազատվեց նաև Պետական էրմիտաժի դիրեկտորի պարտականություններից և ժամանակ ունեցավ ջանքեր գործադրելու, որպեսզի կարողանա ավարտի հասցնել իր թերի մնացած հայագիտական և քրդագիտական աշխատությունները։ Այդ միջոցին նա կրկին Հայաստան եկավ, իր գիտահետազոտական աշխատանքները շարունակելու։

Բայց դադարը երկար չտևեց. 1955 թ. Օրբելին հաստատվեց Լենինգրադի համալսարանի արևելյան ֆակուլտետի դեկանի և Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների պատմության ամբիոնի վարիչի պաշտոնում, իսկ 1956 թ. մինչև մահը նա իբրև վարիչ ղեկավարում էր ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի աշխատանքները։

Մեծանուն գիտնականի աշխատանքային կենսագրությունը ցույց է տալիս, որ սկսած 1918 թ. մինչև իր կյանքի վերջը նա անընդհատ եղել է գիտակազմակերպական ղեկավար աշխատանքի հորձանուտում։ Այս բառը շատ է հարմար նրան, որովհետև Օրբելին սովորական աշխատող չէր, նա գործի մեջ խանդավառվում էր, փոթորկվում, հուզվում, բռնկվում անհաջողության դեպքում, կամ ուրախանում, կարելի է ասել հրճվում էր պատանու պես՝ երբ գործը հաջող էր ընթանում։

Երբեմն ասում են, թե Օրբելին չէր սիրում գրել կամ քիչ է գրել, բայց դա ճիշտ չէ։ Նրա հրատարակած աշխատությունների թիվը հասնում է 85-ի, իսկ 10-ից ավելի գործեր դեռևս մնում են ձեռագիր վիճակում։ Իհարկե, տիրապետելով հսկայական գիտելիքների, նա կարող էր ավելին անել, եթե այդքան զբաղված չլիներ գիտա-կազմակերպական աշխատանքներով։ Բայց ինչ որ գրել է, մնայուն է, որովհետև գրել է մեծ շնչով և խորագիտորեն։

Լայն են եղել նրա հետաքրքրության շրջանակները՝ հայագետ, կովկասագետ, արևելագետ։ Օրբելին նույնքան խոշոր պատմաբան և հնագետ էր, որքան արվեստագետ և բանասեր։ Այս բոլոր բնագավառներում էլ նա ասել է նոր խոսք, առաջադրել նոր խնդիրներ։

Մեծավաստակ գիտնականի աշխատությունների գերակշռող մասը նվիրված է Հայաստանի, Կովկասի և Իրանի նյութական մշակույթի ու արվեստի պատմությանը։ Նրա առաջին աշխատությունների շարքում առանձնակի տեղ են գրավում Անիին նվիրված գործերը՝ «Անի քաղաքի համառոտ ուղեցույցը», «Անվո ավերակները» և «Անիի հնությունների թանգարանի կատալոգը»[1]։ Արտակարգ պերճախոս են Անիի հուշարձանները հեղինակի գրչի տակ։

[1] «Каталог Анийского музея древностей», вып. I. СПб., 1910; «Краткий путеводи-

Նյութական մշակույթի ամեն մի, թեկուզև հասարակ իր, առարկա, Օրբելին դիտում էր իբրև անցյալի պատմության արժեքավոր հուշարձան, ուստի նրա աշխատություններին բնորոշ է հասարակական ու պատմական հիմքի վրա կատարվող կուլտուր-պատմական վերլուծությունը, ըստ որում այդ արվում էր ոչ միայն Հայաստանի, այլև Մերձավոր Արևելքի կուլտուրաների զարգացման ընդարձակ շրջանակներում, նրանց կապերի ու փոխհարաբերությունների մեջ։ Հ. Օրբելու կիրառած մեթոդի բազմակողմանիությանը բնորոշ էր նաև աղբյուրների լայն ընդգրկումը։ Ամեն մի հարց քննարկելիս նա հաշվի էր առնում բոլոր կարգի տվյալները, որոնք ընձեռում էին նյութական մշակույթի հուշարձանները, գրավոր աղբյուրները, լեզուն, ազգագրությունը, բանահյուսությունը, ավանդույթն ու առասպելաբանությունը։ Այդ է պատճառը, որ Խաչենի իշխան Հասան Ջալալի անունով դաշույնի նեֆրիտե մի բռնակ, Խաչենի տապանաքարերն իրենց քանդակներով, Անիի արվեստին հարող մի զանգ, կիլիկյան մի թաս և ճանապարհորդական ջրաման, Թիֆլիսում գտնված խաչի մի բեկոր՝ արաբական արձանագրությամբ, վրացական բրոնզե մի զամբար, ալրանական բարձրաքանդակներն ու կաթսաները, հայերեն և հունարեն արձանագրությամբ արծաթե շերեփները, Ամբերդի բաղնիքն ու նրա մեջ գտնված խեղկատակի կմախքը և այլն, Օրբելու գրչի տակ ստանում են բացառիկ իմաստ ու լեզու և ընթերցողի հետ զրուցում են անցյալի պատմության, մշակույթի, կենցաղի, պատկերացումների, ըմբռնումների իրար հետ կապակցված բազմաթիվ եղելությունների մասին։

Նյութական մշակույթին վերաբերող նրա աշխատությունների շարքում արտակարգ տեղ է գրավում Աղթամարի ճարտարապետական հուշարձաններին և քանդակներին նվիրված ծավալուն մենագրությունը։

Օրբելին տեսել և մանրամասն զննել, նկարագրել էր X դարի հայ մշակույթի և արվեստի այդ գլուխ-գործոցները դեռևս երիտասարդ հասակում, բայց նրանց ուսումնասիրությամբ զբաղվեց տասնյակ տարիներ, կարելի է ասել մինչև կյանքի վերջը, հրապարակ բերելով միջնադարյան հայ մշակույթին և արվեստին վերաբերող մի փայլուն աշխատություն, որը հրատարակվեց ետմահու՝ 1968 թ. Լենինգրադում[2]։

Հ. Օրբելին խոշոր ներդրում է կատարել Մերձավոր Արևելքի, մասնավորապես Իրանի նյութական մշակույթի և արվեստի ուսումնասիրության բնագավառում։ «Մուսուլմանական» արվեստին նվիրված նրա մի շարք հոդվածներ ունեն հանրագիտարանային ընդհանրացնող բնույթ կամ քննարկում են առանձին հարցեր, բայց նա ամենից ավելի զբաղվել է սասանյան Իրանի արվեստի, հատկապես գեղարվեստական մետաղագործության ուսումնասիրությամբ։ Բազմաթիվ աշխատությունների շարքում առանձնապես մեծարժեք ընդհանրացնող գործեր են նրա «Սասանյան մետաղը»[3] աշխատությունը, որը լույս է տեսել առանձին գրքով, Կ. Վ. Տրևերի հեղինակակցությամբ, նաև «Սասանյան և վաղ իսլամական մետաղե առարկաները» աշխատությունը,

---

тель по городищу Ани», СПб., 1910; «Развалины Ани. История, современное состояние, раскопки», СПб., 1911.

[2] И. А. Орбели, Избранные труды, т. I. Из истории культуры и искусства Армении X—XIII вв., М., 1968.

[3] Տե՛ս «Сасанидский металл. Художественные предметы из золота, серебра и бронзы», М.—Л., 1935 (Կ. Վ. Տրևերի հեղինակակցությամբ)։

լույս տեսած «Ուրվագիծ պարսկական արվեստի» բազմահատոր միջազգային հրատարակության մեջ[4], որի խմբագիրներից մեկն էր նա։

Հ. Օրբելին պատշաճ ուշադրություն է նվիրել մշակույթի, արվեստի զարգացման ոչ միայն հասարակական-պատմական, այլև քաղաքական, գաղափարական և էթնիկական պայմանավորվածության հարցերին։ Նա սուր քննադատության է ենթարկել արևելագիտության մեջ շրջող կեղծ տեսությունները։ Նա ժխտեց պանիրանիզմը, որով Մերձավոր Արևելքի մի քանի ժողովուրդների մշակութային ստեղծագործությունները Իրանին վերագրվելով նսեմացվում, նույնիսկ բացառվում էր նրանց ինքնուրույն արժեքը։ Խոշոր արևելագետը մերժեց Մերձավոր Արևելքի բաժանումը քրիստոնեական Արևելքի և մուսուլմանական Արևելքի և նրանց հակադրումը միմյանց, իբրև երկու առանձին և իրարից խիստ տարբեր ու հակադիր ամբողջությունների, այն էլ ոչ միայն դավանաբանական, այլև կուլտուր-պատմական առումով, որով ըստ էության մերժվում էր մշակույթի և արվեստի զարգացման հասարակական-պատմական և դասակարգային նախադրյալների դերն ու նշանակությունը։ Նա ընդգծում է, որ Սասանյան Իրանի, «քրիստոնյա» Բյուզանդիայի, «մուսուլմանական» արաբական խալիֆայության և Թուրք-սելջուկյան մշակույթները չեն կարող ճանաչվել իբրև էթնիկապես միասնական ստեղծագործություններ։ Նրանք առաջացել և զարգացել են պատմական որոշակի նախադրյալների հիման վրա, մի շարք ժողովուրդների մշակութային սերտ փոխհարաբերությունների պայմաններում և կրում են նրանց մշակութային ստեղծագործության տարրերը։ «Պանիրանական», «ընդհանուր քրիստոնեական», «մուսուլմանական» մշակույթների կեղծ տեսությունների քննադատությունը Օրբելու կողմից այսօր էլ չի կորցրել իր նշանակությունը։

Հայագետ Օրբելու ուսումնասիրությունների շարքում ուշագրավ տեղ են դրավում միջնադարյան հայերեն վիմագիր արձանագրություններին նվիրված գործերը։ Դա նոր բնագավառ չէր, դեռևս XIX դարում մի շարք գիտնականներ՝ Հովհաննես Շահխաթունյանցը, Սարգիս Ջալալյանցը, Ներսես Սարգսյանը, Ղեոնդ Ալիշանը և ուրիշներ, հավաքել և հրատարակել էին զգալի թվով հայերեն արձանագրություններ, սակայն դրանք ոչ միայն ամբողջական չէին, այլև չէին բավարարում նման աղբյուրների հրատարակության ժամանակակից պահանջները։ Օրբելին հավաքել և գիտական բարձր մակարդակով հրատարակել է բազմաթիվ հուշարձանների հայերեն արձանագրությունները, քննարկել դրանց վերաբերող շատ հարցեր։ Դեռևս Անիի պեղումների ժամանակ Մառը և Օրբելին հղացան հայերեն վիմագիր արձանագրությունների համահավաք ժողովածու կազմելու միտքը։ Գործը դյուրացնելու և նոր հիմքերի վրա դնելու համար Հ. Օրբելին մանրակրկիտ ուսումնասիրեց վիմագիր արձանագրությունների ձևերը, փակագրերը և Պետերբուրգի կայսերական ակադեմիայի տպարանում պատրաստել տվեց հայերեն հատուկ էպիգրաֆիկ տառաձևեր՝ 500 փակագրերով և հայերեն արձանագրությունների ծրագրված համահավաք ժողովածուի տպագրման առաջին փորձն արեց։ Նա հավաքել էր Անիի և բազմաթիվ այլ վայրերի վիմագիր արձանագրություններ, որպեսզի

---

[4] „Sassanian and early Islamic metalworks". Տե՛ս „A Survey of Persian Art from Prehistoric Times to the Present. Text", vol. I, էջ 716—770, „Plates", vol. IV, London—New York, 1938.

իրականացնի նրանց համահավաք ժողովածուի հրատարակությունը, սակայն նրա երազանքը իրականացնելու պայմանները բացակայում էին։

Երկար տարիներ անց՝ 1950-ական թթ. Օրբելու անմիջական մասնակցությամբ կրկին բարձրացվեց հայերեն վիմագիր արձանագրությունների համահավաք ժողովածուի հրատարակության հարցը, մշակվեցին դրա իրականացման մեթոդներն ու ուղիները և նրա աշակերտների, մասնավորապես Սեդրակ Բարխուդարյանի ջանքերով ձեռնարկվեց հայերեն վիմագիր արձանագրությունների «Դիվանի» հրատարակությունը։ Առաջին պրակը կազմեցին Անիի արձանագրությունները[5], որոնք ժամանակին ընդօրինակել էր Օրբելին։

Մեծ է նաև բանասեր Օրբելու վաստակը։ Մի քանի տասնյակ հայերեն արձանագրությունների գիտական քննությամբ և հրատարակությամբ դեռևս իր գիտական գործունեության սկզբնական շրջանում՝ 1909—1920 թթ., նա ցուցաբերեց բազմահմուտ տեքստաբանի և բանասեր-լեզվաբանի մեծ կարողություններ։ 1918 թ. նա հրատարակեց VII դարի նշանավոր մաթեմատիկոս Անանիա Շիրակացու թվաբանական խնդիրների՝ «Յաղագս հարցման և լուծման» դասագիրքը ռուսերեն թարգմանությամբ և արժեքավոր ծանոթագրություններով[6]։

Մերձավոր Արևելքի միջնադարյան գրական հուշարձաններից Հ. Օրբելին առանձնապես բարձր էր գնահատում Ֆիրդուսու «Շահնամեն», Ռուսթավելու «Ընձենավորը», Նիզամու «Ֆահրադ և Շիրին», «Լեյլի և Մեջնուն» և մյուս պոեմները, Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները։ Հետևելով իր ուսուցիչ Ն. Մառին, նա հայկական միջնադարյան առակներով զբաղվել է երկար տարիներ և փայլուն արդյունքով։ Նա հրատարակության էր պատրաստել մի ծավալուն ուսումնասիրություն և գրաբարից ռուսերեն թարգմանել շուրջ հինգ հարյուր առակ՝ ընտիր թարգմանությամբ։ 142 առակներից կազմված մի ժողովածու, ընդարձակ առաջաբանով և ծանոթագրություններով, լույս ընծայվեց 1956 թ.[7], իսկ մենագրական ծավալուն ուսումնասիրությունը՝ 1968 թ., նրա անտիպ աշխատությունների առաջին հատորում։ Այդ ուսումնասիրության մեջ հեղինակը մեծ հմտությամբ բացահայտում է Հայաստանի և հայ ժողովրդի XII—XIII դդ. հասարակական-տնտեսական կյանքի, կենցաղի դաղափարական և մշակութային զարգացման տարբեր կողմերը, մասնավորապես քաղաքային կյանքի արհեստավորության և ընդհանրապես բնակչության ստորին խավերի ինքնագիտակցության աճը, ուղղված աշխարհիկ և հոգևոր իշխող դասերի ճնշման և կեղեքման դեմ։

Ինչ վերաբերում է հարևան ժողովուրդների՝ վերևում նշված խոշորագույն գրական հուշարձաններին, ապա նրանց մասին արտահայտվելու բարեբախտ առիթները հետևեցին մեկը մյուսին։ 1934 թ., երբ նշվում էր Ֆիրդուսու ծննդյան 1000-ամյակը, Օրբելին հանդես եկավ «Շահնամեին» նվիրված ներածական փայլուն ճառով՝ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի և էրմիտաժի միացյալ հանդիսավոր նիստում, ապա այդ ճառը, իբրև ներածական, տպագրվեց Ֆիրդուսուն նվիրված հոբելյանական ժողովածուում, որը ստեղծվել էր իր նախաձեռնությամբ և խմբագրությամբ։

---

5 «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, Երևան, 1966։

6 «Вопросы и решения вардапета Анания Ширакца, армянского математика VII века», Пг., 1918.

7 Иосиф Орбели, Басни Средневековой Армении, М.—Л., 1956.

Հինավուրց առասպելաբանության էությունն ու խորհուրդը բացահայտող գործ է Շահնամեի մի հատվածի և դրա գեղարվեստական մարմնացումը հանդիսացող արծաթե մի ափսեի քննությանը նվիրված «Բահրամ Գոռ և Աղադեհ» կոչվող ծավալով փոքրիկ, բայց հարցերի ընդգրկումով և վերլուծական խորությամբ հիացմունք առաջացնող հոդվածը, որը տպագրվել է նույն 1934 թ. «Ֆիրդուսու «Շահնամեն» ժողովածուում և առանձին գրքույկով։

1936 թ. մեծ արևելագետը Կ. Վ. Տրևերի հեղինակակցությամբ հրատարակում է «Շաթրանգ. գիրք շախմատի մասին» աշխատությունը[8], նվիրված արևելքում շախմատի առաջացման, ապա Եվրոպա անցնելու պատմությանը։

1938 թ., երբ նշվում էր Ռուսթավելու 750-ամյա հոբելյանը, Օրբելին էրմիտաժում կազմակերպեց Ռուսթավելու դարաշրջանին նվիրված փառահեղ ցուցահանդես, մասսայականացրեց Անդրկովկասի ժողովուրդների XII—XIII դդ. մշակույթը, ձեռնարկեց «Ռուսթավելու դարաշրջանի հուշարձանները» ժողովածուի պատրաստումն ու հրատարակությունը, որի մեջ զետեղեց հոյակապ հոդվածների մի ամբողջ շարք։

1939 թ. նշվում էր հայ ժողովրդի մեծագույն էպիկական ստեղծագործության՝ Սասունցի Դավթի 1000-ամյակը և մեծ գիտնականը առիթ ունեցավ նոր շուքով ու փայլով դրսևորելու իր գիտա-կազմակերպական շնորհքը, իր ճարտասանական և գիտական ստեղծագործական տաղանդը։ Նրա ղեկավարությամբ Հայաստանի պետական պատմական թանգարանում կազմակերպվեց էպոսին և հայկական մշակույթին ու արվեստին նվիրված մի ծավալուն ցուցահանդես, հրատարակվեցին էպոսի հայերեն և ռուսերեն համահավաք բնագրերը, որոնց համար նա գրեց իր փայլուն առաջաբանները և խմբագրեց ռուսերեն թարգմանության տեքստը։ Պետք էր տեսնել, թե ինչ ոգևորությամբ, ներշնչանքով էր նա գլխավորում հոբելյանական միջոցառումները, ինչպիսի փայլով էր նա կարդում իր ճառերն ու զեկուցումները՝ Երևանում, Մոսկվայում, Լենինգրադում և այլուր, տպագրում հոդվածներ բազմաթիվ թերթերում և ամսագրերում։ Հետագայում նա զարգացրեց և խորացրեց հայկական անմահ էպոսի վերաբերյալ իր ուսումնասիրությունները և 1956 թ. ռուսերեն և հայերեն լեզուներով հրատարակեց «Հայկական հերոսական էպոսը» աշխատությունը[9], որը նոր և չգերազանցված խոսք էր էպոսի ակունքների, պատմական ատաղձի և ձևավորման, նրա խոր ժողովրդականության մասին։

Հովսեփ Օրբելին մեծ ուշադրություն էր դարձնում անցյալի ժամանակագրության հարցերին և գիտնականներին ու ընթերցողներին դյուրություն տալու համար կազմել է հիջրի արաբական տարեթվերը, ինչպես և հայկական տարեթվերը եվրոպականի վերածելու համար մշակված և դյուրամատչելի աղյուսակները։ Դրանցից առաջինը հրատարակված է 1940 թ. և ընթերցողը կարող է հիջրի առաջին, այսինքն 622 թ. մինչև 1941 թ. գտնել արաբական և եվրոպական բոլոր տարեթվերի, ամիսների և շաբաթվա օրերի ժամանակագրական զուգադիպությունները[10]։ Հայ-եվրոպական ժամանակագրական աղյուսակները մնում են չհրատարակված։

---

[8] И. А. Орбели, К. В. Тревер, Шатранг. Книга о шахматах. Л., 1936.

[9] Иосиф Орбели. Армянский героический эпос, Ереван, 1956. նույնը հայերեն։

[10] «Синхронистические таблицы для перевода исторических дат по хиджре на европейское летоисчисление», Л., 1940.

Ակադեմիայի գիտնականի արխիվում պահվում են բազմաթիվ անտիպ աշխատություններ, որոնց թվում՝ վիմագիր արձանագրությունների ժողովածուներ, բանահյուսական հարուստ նյութեր, գրառված Մոսկվայի հայ և քուրդ բնակչությունից 1911—1912 թթ.; Մոսկվայի հայկական և քրդական բարբառների բառարաններ, հայ պատմիչներից Եղիշեի, Ղազար Փարպեցու և Թովմա Արծրունու պատմական երկերի ռուսերեն թարգմանությունները, ինչպես նաև նրա ճառերի ու զեկուցումների գրանցումները և այլ գործեր։

Նախագծվում էր ակադեմիկոս Հովսեփ Օրբելու աշխատությունները հրատարակել չորս հատորով, սակայն դա իրականացվում է զգալիորեն փոփոխված ծրագրով։ 1963 թ. Երևանում հրատարակվեց նրա ընտիր երկերի մի հատորը, որի 684 էջերում ամփոփված են առանձին գրքույկներով տպագրված և ամսագրերում սփռված աշխատություններն ու հոդվածները։ Հատորում չեն ընդգրկված նրա հրատարակած մի շարք աշխատություններ, որոնք լույս են տեսել առանձին գրքերով կամ ունեն մեծ ծավալ, օրինակ՝ «Սասանյան մետաղ», «Շաթրանգ» աշխատությունները, որոնք գրված են Կ. Վ. Տրեվերի հեղինակակցությամբ, «Սասանյան և վաղ իսլամական մետաղե առարկաներ» անգլերեն հրատարակված աշխատությունը, «Հայկական հերոսական էպոսը» գիրքը և այլն։ Դրանք կարող են մի սովոր հատոր կազմել եթե ոչ ավելին։

Լենինգրադում երկու հատորով լույս են ընծայվում նրա անտիպ երկերը, նույնպես «Ընտիր երկեր» խորագրով և ինչպես վերևում նշվեց, առաջին հատորը, որը լույս է տեսել 1968 թ. 568 էջերով, ընդգրկում է հեղինակի երկու ծավալուն աշխատությունները՝ «Հայկական ճարտարապետական հուշարձանները Աղթամար կղզում» և «Միջնադարյան Հայաստանի առակները»։ Հատորի խմբագրական առաջաբանում նշվում է, որ երկրորդ հատորը նույնպես բաղկացած է լինելու երկու մասից և ընդգրկելու է 1911—1912 թթ. Մոսկվում Օրբելու կատարած աշխատանքների արդյունքները՝ այն ժամանակ այդ լեռնային երկրամասում բնակվող հայերի, ինչպես և քրդերի բարբառների բանահյուսությանը, բարբառներին և ազգագրությանը նվիրված ուսումնասիրությունները։ Այլ խոսքով, Օրբելու անտիպ երկերի մի մասը նույնպես դուրս է մնալու հրատարակվող հատորներից։

Ամփոփելով մեր խոսքը մեծ գիտնականի թողած գիտական ժառանգության մասին, կարող ենք ասել, որ նրա գրած աշխատությունների թիվը փոքր չէ, իսկ նրանց ընդգրկումը և նշանակությունը ավելի մեծ են։ Մենք գործ ունենք Հայաստանի, Կովկասի և Իրանի դարավոր մշակույթների պատմության մի հարուստ գանձարանի հետ, որը ստեղծել է Հովսեփ Օրբելին։ Ինչ խոսք, այստեղ կան որոշ թերություններ, վրիպումներ, բայց դրանց թիվը մեծ չէ, դրանք որակ չեն կազմում և չեն խախտում այդ գանձարանի արժանիքներն ու արժեքը։

Զգալի է ակադեմիկոս Օրբելու վաստակը գիտական կադրեր պատրաստելու, կարող ենք ասել նաև գիտական կոլեկտիվներ ստեղծելու գործում։ Բավականաչափ մեծ է նրա աշակերտների թիվը, և նրանցից շատերն արդեն անվանի գիտնականներ են։ Ինչ վերաբերում է գիտական կոլեկտիվներ ստեղծելուն, ապա պետք է ասել, որ թեև Օրբելին շուտ բռնկվող մարդ էր, ցասման պահին ահեղ, երբեմն անարդարացի, բայց գիտեր նաև զղջալ, շատ մեղմ և բարի լինել, կարողանում էր ստեղծել աշխատանքային միջավայր։ Նա ուներ

խոշոր գործեր, միջոցառումներ ձեռնարկելու տարերք ու թափ և կարողանում էր կոլեկտիվը ոգևորել, վարակել իրեն իսկ բնորոշ եռուզեռով, կազմակերպել նպատակամղված աշխատանք՝ լավ տեսնելով գիտության ոչ միայն այսօրը, այլև վաղը։

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին և՛ մեծ գիտնական էր, և՛ մեծ մարդ-քաղաքացի։ Անձնական շահին և բարեկեցությանը հետամուտ լինելը նրան խորթ էր, իսկ հասարակական գործին ծառայում էր բոլորանվեր։ Այդ բանը ցայտուն կերպով դրսևորվեց Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո՝ 1918 թ. սկսած իր բազում պարտականությունները կատարելիս, էրմիտաժի դիրեկտորի և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի նախագահի, ապա Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնները վարելիս, բայց ամենից ավելի Հայրենական պատերազմի տարիներին։ Երբ սկսվեց պատերազմը, նա մնաց Լենինգրադում և գլխավորեց ոչ միայն էրմիտաժի, այլև ակադեմիական գրադարանների և թանգարանների ֆոնդերի պահպանությունը և փոխադրումը երկրի խորքերը։ Նա եռուն գործունեություն ծավալեց պաշարված Լենինգրադում՝ այցելում էր գործարանները, զորամասերն ու ռազմական նավերը և իր հանդիպումներով, ելույթներով, զրույցներով ամրապնդում էր ռազմիկների հայրենասիրությունն ու հաղթանակի հավատքը։ Լենինգրադի պաշարման ճեղքումից հետո, հատուկ կարգադրությամբ նա թողեց Լենինգրադը և գալով Հայաստան, ոչ միայն գլխավորեց գիտությունների ակադեմիան, այլև ծավալեց եռանդուն հայրենասիրական գործունեություն ընդդեմ գերմանական զավթիչների, հանուն հաղթանակի։ Վերադառնալով Լենինգրադ, դեռևս 1944 թ. նա ընտրվեց Լենինգրադին և քաղաքամերձ պալատներին, կուլտուրայի ու արվեստի հուշարձաններին թշնամու պատճառած վնասների հաշվառման հանձնաժողովի անդամ և քաջատեղյակ էր ֆաշիստական զավթիչների բարբարոսություններին։ Ահա թե ինչու հիմնավոր ու զորեղ հնչեց պատերազմի հանցավորներին դատող Նյուրնբերգի միջազգային դատարանում որպես վկա կանչված պատկառելի գիտնականի՝ թշնամու չարագործությունները մերկացնող ցասումնալից վկայությունը, որը ողջ աշխարհում մեծ արձագանք ունեցավ։

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին ժողովրդականություն վայելող գիտնական և գործիչ էր։ Նրա անունը քաջ հայտնի էր ոչ միայն Սովետական Միության սահմաններում, այլև արտասահմանի գիտական շրջաններում։ Իր մեծ և բազմակողմանի վաստակին համապատասխան, նա արժանացել էր մեծամեծ պատիվների՝ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ էր (1935), ՍՍՀՄ ճարտարապետության ակադեմիայի իսկական անդամ (1940), Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս (1943), հռչակավոր Պետական էրմիտաժի դիրեկտոր, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ և այլն, և այլն։

Նա խոշոր պատիվների էր արժանացել նաև արտասահմանում. 1935 թ. ընտրվել էր Թեհրանի համալսարանի պատվավոր պրոֆեսոր և Իրանի լուսավորության մինիստրության կողմից պարգևատրվել «Գիտական ծառայությունների համար» I կարգի շքանշանով։ 1944 թ. ընտրվել է Լոնդոնի Հնագիտական ընկերության պատվավոր անդամ, 1945 թ.՝ Իրանի ակադեմիայի պատվավոր անդամ։

Սովետական կառավարությունը, բարձր գնահատելով նրա ծառայությունները, պարգևատրել է նրան Լենինի երկու, Կարմիր դրոշի երկու շքանշաններով, «Լենինգրադի պաշտպանության համար», «Կովկասի պաշտպանության համար» և այլ մեդալներով։

Մեծ գիտնականը՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, ապրեց, գործեց և ստեղծագործեց փոթորկվող եռանդով, մեծ տաղանդով, թողնելով իր վաստակի համբավը, նշանավոր գիտական ժառանգություն, անմոռաց անուն և անմարելի հիշատակ։

АКАДЕМИК ИОСИФ ОРБЕЛИ

(К 90-летию со дня рождения)

Академик АН АрмССР Б. Н. АРАКЕЛЯН

(Резюме)

Иосиф Абгарович Орбели сформировался как ученый в Петербурге, а свою научную деятельность начал в качестве участника археологических раскопок столицы средневековой Армении Ани. После Октябрьской революции И. А. Орбели развивает бурную научную и научно-организационную деятельность в системе Академии наук СССР, Академии материальной культуры, в Ленинградском университете. В его научно-организационной деятельности особое место занимает работа в Государственном Эрмитаже и в Академии наук Армянской ССР.

В 1936 г. Иосиф Абгарович руководил раскопками крепости Анберд в Армении, а в 1938 г. был избран председателем Армянского филиала Академии наук СССР. Он вложил большой труд и энергию в развитие наук в Армении, а в 1943 г., когда была создана Академия наук Армянской ССР, был избран ее президентом.

Академик Иосиф Орбели был выдающимся ученым-арменоведом, кавказоведом, востоковедом, историком, филологом, искусствоведом. Его опубликованные труды, число которых доходит до 85, относятся к истории материальной и духовной культуры Армении, Закавказья, Ирана. В архиве ученого хранится свыше десяти неопубликованных работ. И. А. Орбели пользовался большой известностью в СССР и был признанным за рубежом ученым. Он одновременно был настоящим гражданином и пламенным патриотом нашей Родины. Советское правительство, признавая большие заслуги академика Орбели, наградило его двумя орденами Ленина, двумя орденами Красного Знамени и медалями.